

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2005թ. հունվար-ապրիլին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 55.8 մլրդ.դրամ, որը 2004թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը գերազանցել է 1.7%-ով: 2005թ. ապրիլի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է 2005թ. մարտի 105.5%-ը:

Հանրապետությունում ընթանում են զարնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները: 2005թ. մայիսի 1-ի դրությամբ հանրապետությունում կատարվել է 46356 հեկտար զարնանացան մշակաբույսերի ցանք, որը 2004թ. մակարդակը գերազանցում է 9490 հեկտարով կամ 25.7%-ով:

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի զարնանացանի ընթացքը հանրապետությունում

(հեկտար)

Մշակաբույսերի անվանումը	Ցանվել է		01.05.2005թ. 01.05.2004թ. նկատմամբ, %
	01.05.2005թ.	01.05.2004թ.	
Հացահատիկային և հատիկա-ընդեղենային մշակաբույսեր	33605	27408	122.6
Կարտոֆիլ	8383	5667	147.9
Բանջարանոցային մշակաբույսեր	3078	2436	126.4
Բոստանային մշակաբույսեր	559	344	162.5
Կերային մշակաբույսեր	671	909	73.8
Այլ մշակաբույսեր	60	102	58.8
ԸՆդամենը ՀՀ	46356	36866	125.7

Անասնաբուժական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2005թ. հունվար-ապրիլ	2005թ. հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2005թ. հունվար-ապրիլ	2005թ. հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2005թ. հունվար-ապրիլ	2005թ. հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
ք.երևան	0.1	100.0	0.9	112.5	15.7	103.3
Արագածոտն	2.6	96.3	15.2	107.8	6.7	87.0
Արարատ	2.1	95.5	9.8	106.5	10.5	93.8
Արմավիր	3.1	114.8	8.5	104.9	10.3	93.6
Գեղարքունիք	3.8	97.4	23.5	107.3	10.6	98.1
Լոռի	2.4	100.0	15.5	106.2	6.7	69.8
Կոտայք	2.5	86.2	13.8	111.3	74.7	97.9
Շիրակ	3.3	97.1	19.7	107.1	9.9	98.0
Սյունիք	1.9	90.5	11.2	107.7	3.8	97.4
Վայոց ձոր	0.8	88.9	5.0	104.2	3.6	85.7
Տավուշ	1.8	94.7	9.1	105.8	5.3	98.1
ԸՆդամենը ՀՀ	24.4	96.8	132.2	107.1	157.8	95.4

2005թ. հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, անասնաբուժական հիմնական մթերքի արտադրության ծավալները նվազել են, բացառությամբ կաթի ծավալից, որի արտադրությունը 2004թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշը գերազանցել է 8.8 հազ. տոննայով, կամ 7.1%-ով:

¹ Ներառյալ ներքին սպառումը: